OGP LOCAL

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Funded by the European Union

Open Government Partnership

ngo center

Այս ձեռնարկը մշակվել է «Unlocking Progress. Վանաձորի և Գյումրիի ԲԿԳ գործողությունների ծրագրի վերանայում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից՝ Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ և Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն իր գործունեությունը սկսել է 1994 թվականին, որպես Ամերիկային հայկական համագումարի ծրագիր, ապա 2005 թվականին գրանցվել է որպես տեղական կազմակերպություն:

ՀԿ Կենտրոնը կոչված է մասնակցային ժողովրդավարության կայացմանը՝ քաղաքացու և ինստիտուտների զորեղացմամբ:

Նախաբան

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) գործընթացները հիմնված են թափանցիկության, հանրային մասնակցության և հաշվետվողականության սկզբունքների վրա: Այս սկզբունքների արդյունավետ իրականացումը պահանջում է ոչ միայն հավակնոտ պարտավորությունների ձևավորում, այլև դրանց իրականացման շարունակական մոնիթորինգ, գնահատում և ուսուցման մեխանիզմների ներդրում: Հենց այս նպատակով է մշակվել սույն ուղեցույցը, որը ներկայացնում է ԲԿԳ Տեղական գործընթացներում մոնիթորինգի մարմինների գործունեության հիմնական մոտեցումները, գործառույթները և գնահատման մեթոդաբանությունը:

Սույն նյութը նպատակ ունի աջակցել վստահելի, ապացույցների վրա հիմնված և համագործակցային մոնիթորինգի մշակույթ ձևավորելուն՝ նպաստելով տեղական մակարդակում բաց կառավարման բարեփոխումների որակի և ազդեցության բարձրացմանը:

Ուղեցույցը հիմնված է ԲԿԳ Անկախ Հաշվետվության Մեխանիզմի (ԱՀԿ) կողմից մշակված միջազգային չափանիշների և գործնական մոտեցումների վրա՝ հարմարեցված տեղական համատեքստին և Հայաստանում ԲԿԳ գործընթացների իրականացման փորձին:

Այն նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մոնիթորինգ իրականացնող մասնագետների և ԲԿԳ գործընթացում ներգրավված այլ շահակիցների համար՝ որպես գործնական ձեռնարկ՝ համաստեղծման, պարտավորությունների իրականացման և արդյունքների գնահատման գործընթացներում արդյունավետ մասնակցություն ապահովելու նպատակով:

Մոնիթորինգի մեխանիզմ ձևավորում

Մոնիթորինգի մարմինը պետք է հստակ իմանա՝ ինչի համար է ստեղծված և ինչ է անելու:

Այն հիմնականում ծառայում է՝

- հաշվետվողականության ապահովմանը,
- ուսուցմանը և բարելավմանը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մոնիթորինգի մարմինը տեղական շահակիցների համար հաշվետվողականության և ուսուցման կարևոր գործիք է: ԲԿԳ Տեղական ձեռնարկը սահմանում է նվազագույն կանոններ՝ ապացույցների հավաքագրման, համաստեղծման և պարտավորությունների իրականացման գնահատման, ինչպես նաև վերջնական ուսուցման գործընթացի համար:
Մոնիթորինգը և հաշվետվությունը գործողությունների ծրագրի ցիկլի հիմնական մասերն են: Դրանք ապահովում են հաշվետվողականության մեխանիզմ, կարող են օգտագործվել դասեր քաղելու և պարտավորությունների ժամանակին կատարումը խթանելու համար: Գործողությունների ծրագրի ներկայացման պահին ԲԿԳ տեղական անդամները (համայնքները) պետք է ընտրեն Մոնիթորինգի Մարմին, որը կիրականացնի իրենց գործողությունների ծրագրի անկախ գնահատում:

Մոնիթորինգի մարմինը կարող է լինել երրորդ կողմ, ինչպիսիք են.

- անկախ վերահսկող կառույց,
- OGP հարթակի ներսում գործող մեխանիզմ (օր.՝ աշխատանքային խումբ),
- գիտահետազոտական կամ ակադեմիական հաստատություն,
- այլ անկախ կառույց՝ տեղական համատեքստին համապատասխան:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀՍՏԱԿ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մոնիթորինգի մարմինը կարող է կազմված լինել մեկ անձից, թիմից կամ տարբեր հանրային և մասնավոր կառույցների ներկայացուցիչներից կամ լինել որևէ կառույց: Կարևոր է, որ նրանք ունենան բավարար ժամանակ՝ համակարգելու ԲԿԳ գործընթացում ստեղծվող տեղեկատվությունը, ինչպես նաև իրականացնելու հարցազրույցներ պետական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ անհրաժեշտ տվյալներ հավաքելու համար: Այս աշխատանքը պետք է իրականացվի չեզոք դիրքից՝ անկախ այն բանից, թե մոնիթորինգ իրականացնողը որ ոլորտից է գալիս:

Միևնույն ժամանակ, ցանկալի է, որ մոնիթորինգի մարմնի անդամներն ունենան որոշակի հիմնական հմտություններ, որպեսզի կարողանան կատարել իրենց գործառույթները առանց նախնական երկարատև ուսուցման: Կարևոր է ներգրավել փորձ ունեցող մասնագետների՝ հատկապես հետազոտության, մոնիթորինգի կամ գնահատման ոլորտներում, և հատկապես բաց կառավարման, թափանցիկության կամ կառավարման թեմաներով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

1 **ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**
(Inception Assessment)

2 **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**
(End-of-Commitment Assessment)

3 **ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**
(Final Learning Exercise)

Քանի որ ԲԿԳ գործողությունների ծրագրերը հիմնականում բարդ և բազմաշերտ են, մոնիթորինգի մարմինները սովորաբար կիրառում են որակական հետազոտության մեթոդներ:

Սկզբնական գնահատման համար անհրաժեշտ է ուսումնասիրել համաստեղծման պահանջների և առաջարկվող պրակտիկաների իրականացումը, ինչպես նաև առաջին պարտավորությունների ձևավորումը: Վերջնական գնահատման դեպքում պետք է գնահատել պարտավորությունների կատարման աստիճանը և դրանց իրականացման նախնական արդյունքները:

Տեղեկատվություն հավաքելու համար կարելի է օգտագործել ինչպես առցանց, այնպես էլ առկա (դեմ առ դեմ) մեթոդներ, օրինակ՝

- առցանց հարցումներ (SurveyMonkey, Google Forms),
- առցանց ձևաթղթեր և օրագրեր (շահակիցների կողմից տեղեկատվություն փոխանցելու համար),
- մոնիթորինգի այցեր (կատարման ընթացքը փաստագրելու համար),
- տարբեր առցանց գործիքներ և հարթակներ՝ կախված գործընթացի փուլից:

Օգտագործվող մեթոդները կախված են այն ռեսուրսներից և մարդկային կարողություններից, որոնք տեղական կառույցը/համայնքը կարող է հատկացնել մոնիթորինգի մարմնին: ԲԿԳ Տեղական անդամներն իրենք են պատասխանատու ապահովելու անհրաժեշտ պայմաններ, որպեսզի մոնիթորինգի մարմինը կարողանա լիարժեք կատարել իր դերը: Որոնք են համարվում ապացույցներ, այդ մասին կարող ես կարդալ այստեղ:

Միևնույն ժամանակ, OGP տեղական անդամները պատասխանատու են ապահովելու, որ մոնիթորինգ իրականացնող մարմինը ունենա անհրաժեշտ ռեսուրսներ (ֆինանսական, մարդկային, տեխնիկական), որպեսզի կարողանա լիարժեք կատարել իր գործառույթները:
Բացի այդ, կառավարությունը պետք է եռամսյակը մեկ հետևի իրենց առաջընթացին՝ առցանց հետևորդին տրամադրելով պարտավորությունների կատարման վերաբերյալ թարմացված տեղեկատվություն:
Մոնիթորինգի մարմինը պետք է լրացնի գնահատման ձևաչափերը՝ հիմնվելով այս գործընթացում հավաքագրված տվյալների վրա:

Տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը պետք է լինեն՝

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ

Պետական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան ներկայացնելու իրենց տվյալներն ու դիտարկումները՝ գործընթացի առաջընթացի և խնդիրների վերաբերյալ:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ ՉԻՄՆՎԱԾ

Հավաքված տվյալները չպետք է հիմնված լինեն միայն կարծիքների վրա: Անհրաժեշտ է ստուգել վիճահարույց պնդումները տարբեր աղբյուրներով և վերլուծությունը կառուցել փաստերի վրա:



Մոնիթորինգի հիմնական գործառույթները

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սկզբնական գնահատումը պետք է ավարտվի ծրագրի ներկայացումից հետո 2 ամսվա ընթացքում:
Սկզբնական գնահատումը նպատակ ունի գնահատել համաստեղծման գործընթացը, ինչպես նաև պարտավորությունների ձևավորման որակը դրանց սկզբնական փուլում:
Այս գնահատումը պետք է ավարտվի գործողությունների ծրագրի ներկայացումից հետո երկու ամսվա ընթացքում:
Սկզբնական գնահատման ձևաչափն անգլերեն հասանելի է այստեղ:

Մոնիթորինգի մարմինները պետք է իրականացնեն երեք հիմնական գնահատում՝ տեղական անդամների պարտավորությունների իրականացման արդյունավետությունը գնահատելու համար՝ հիմնվելով ԲԿԳ Տեղականի կողմից տրամադրված ձևաչափերի վրա.

1. Սկզբնական գնահատում (Inception Assessment)
2. Պարտավորությունների ավարտական գնահատում (End-of-Commitment Assessment)
3. Վերջնական ուսուցման վերլուծություն (Final Learning Exercise)

Մասնավորապես, սկզբնական գնահատումը կգնահատի հետևյալ տարրերը՝

1. Համաստեղծման պահանջներին և առաջարկություններին համապատասխանության աստիճանի գնահատում՝ կենտրոնանալով հետևյալ չափանիշների վրա.
   - Երկխոսության և համաստեղծման համար տարածքներ և հարթակներ (տե՛ս անգլերեն ձեռնարկի 3.3.1 բաժինը՝ նվազագույն պահանջների մանրամասն բացատրության համար):
   - Երկխոսության շարունակականություն:
   - Տեղեկատվության տարածում (տե՛ս անգլերեն ձեռնարկի 3.3.2 բաժինը՝ առաջարկվող գործելակերպերի մանրամասն բացատրության համար):

2. Պարտավորությունների բնութագրերի գնահատում՝ համաձայն հետևյալ չափանիշների.
   - Համապատասխանություն ԲԿԳ թափանցիկության, հաշվետվողականության և հանրային մասնակցության արժեքներին (անգլերեն տարբերակն այստեղ):

Հայերենը հասանելի է Հավելված 1-ում:

   - Պարտավորությունների ստուգելիություն (անգլերեն տարբերակն այստեղ):

Հայերենը հասանելի է Հավելված 2-ում:

   - Պարտավորությունների հնարավոր ազդեցություն:

Գնահատումը պետք է ապահովի.

- Պահանջներին համապատասխանության աստիճանը,
- Համաստեղծման առաջարկություններ,
- Սկզբնական պարտավորությունների նախագծումը կամ բնութագրերը:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԲԱԶՄԱՇԱՀԱԿԻՑ ՖՈՐՈՒՄ
(ՀԱՐՑԵՐ 1.1, 1.2 ԵՎ 1.3)

ԲԿԳ Տեղականի ձեռնարկի համաձայն՝ տեղական ինքնակառավարումը պետք է ստեղծի մասնակցային հարթակ՝ կառավարության և ոչ կառավարական շահակիցների ներգրավմամբ՝ գործողությունների ծրագրի մշակման և վերանայման համար:

Բազմաշահակից ֆորումը պետք է ունենա հետևյալ նվազագույն հատկանիշները.

- **Ֆորումի առկայություն.** գոյություն ունի հարթակ, որտեղ շահակիցները քննարկում են պարտավորությունների կատարման ընթացքը,
- **Բազմաշահակից լինելը.** գործընթացին կարող են մասնակցել քաղաքացիական հասարակությունը և այլ ոչ կառավարական շահակիցներ,
- **Կանոնավորություն.** կազմակերպվել է առնվազն մեկ հանդիպում՝ կառավարության և ՔՀԿ-ների մասնակցությամբ՝ գործողությունների ծրագիրը մշակելու համար:

ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՈՒՄ
(ՀԱՐՑ 1.4)

ԲԿԳ Տեղականի կանոնների համաձայն՝ գործողությունների վերջնական ծրագիրը պետք է հաստատվի ոչ կառավարական շահակիցների կողմից: Կառավարությունը պետք է ներկայացնի այդ շահակիցների ցանկը:
Մոնիթորինգի մարմինը պետք է ստուգի՝ փաստերով կամ հարցազրույցներով, թե արդյոք շահակիցները հաստատել են ծրագիրը մինչև դրա ներկայացումը ԲԿԳ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Ստորև աղյուսակում ներկայացված են Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) գործընթացում հանրային մասնակցության և համագործակցության ապահովման հիմնական չափանիշները, ներառյալ տեղեկատվության հասանելիությունը, շահակիցների նախնական իրազեկումը, ներառական մասնակցությունը, հետադարձ կապի տրամադրումը և կառավարության ու քաղաքացիական հասարակության միջև համագործակցության մակարդակը:
Աղյուսակը նաև ներառում է մոնիթորինգի մարմնի կողմից կիրառվող գնահատման հիմնական մոտեցումները և համաստեղծման փուլի գնահատման հարցաշարի համապատասխան հարցերի համարները, որոնց համար կիրառելի է այդ տեղեկատվությունը:

Թեմա	Հիմնական պահանջ	Մոնիթորինգի մարմնի գնահատման չափանիշ	Հարց
Կայք կամ վեբ էջ	Տեղական անդամները կարող են ընտրել ցանկացած հարթակ՝ ԲԿԳ գործընթացի մասին տեղեկատվություն հրապարակելու համար: Այն պետք է լինի հասանելի և հեշտ օգտագործվող:	Ստուգել, որ՝ 1) կայքը հասանելի է առանց սահմանափակումների, 2) հրապարակված է ԲԿԳ գործընթացի մասին տեղեկատվություն (հանրային քննարկումներ, ֆորում, պարտավորությունների իրականացում և այլն), 3) տեղեկատվությունը թարմացվում է առնվազն յուրաքանչյուր 4 ամիսը մեկ:	2.1
Նախնական տեղեկատվության տրամադրում	Կառավարությունը պետք է նախապես տեղեկացնի շահակիցներին ԲԿԳ գործընթացի մասին, որպեսզի նրանք կարողանան պատրաստված մասնակցել:	Գնահատել՝ արդյոք մինչև հանդիպումները կառավարությունը տրամադրել է անհրաժեշտ տեղեկատվություն շահակիցներին:	2.2
Ներառականություն	Պետք է ապահովվի բոլոր շահագրգիռ անձանց մասնակցության հնարավորությունը գործողությունների ծրագրի մշակման գործընթացում:	Գնահատել՝ արդյոք ստեղծվել են մասնակցային հարթակներ (հանրային քննարկումներ, հանդիպումներ և այլն) քաղաքացիների և ՔՀԿ-ների համար:	2.3
Հետադարձ կապ	Կառավարությունը պետք է տեղեկացնի շահակիցներին որոշումների, գործողությունների և արդյունքների մասին և ցույց տա, թե ինչպես են հաշվի առնվել նրանց առաջարկները:	Անհրաժեշտության դեպքում իրականացնել հարցազրույցներ շահակիցների հետ՝ պարզելու, թե արդյոք ապահովվել է բավարար հետադարձ կապ:	2.4
Համագործակցություն	Կառավարությունն ու ոչ կառավարական շահակիցները պետք է համատեղ աշխատեն առաջնահերթությունների սահմանման և պարտավորությունների մշակման ուղղությամբ:	Գնահատել՝ արդյոք ծրագրի մշակման ընթացքում եղել է իրական և արդյունավետ համագործակցություն: Լավ փորձ են համարվում համատեղ քննարկումները, հանդիպումները և առցանց գործիքների կիրառումը՝ լայն մասնակցություն ապահովելու նպատակով:	2.5

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲԿԳ Տեղական անդամնի ձեռնարկի համաձայն՝ մոնիթորինգի մարմինը գնահատում է առաջին պարտավորությունների ձևավորումը՝ հետևյալ չափանիշներով.

- պարտավորությունների ստուգելիություն,
- համապատասխանություն բաց կառավարման արժեքներին (թափանցիկություն, հաշվետվողականություն, հանրային մասնակցություն),
- արդյունք ապահովելու ներուժ:

Թեմա	Հիմնական պահանջ	Մոնիթորինգի մարմնի գնահատման չափանիշ	Հարց
Պարտավորության ստուգելիություն	Պարտավորությունը համարվում է ստուգելի, եթե դրա նպատակներն ու գործողությունները հստակ են և հնարավոր է գնահատել դրանց իրականացումը:	Գնահատել՝ արդյոք նախատեսված քայլերն ունեն հստակ և ստուգելի արդյունքներ (output) և չափելի ազդեցություն (outcome), որը հնարավոր է գնահատել իրականացման ավարտին:	3.1.1
Համապատասխանություն բաց կառավարման արժեքներին	Պարտավորությունները պետք է նպաստեն թափանցիկությանը, հանրային մասնակցությանը կամ հաշվետվողականությանը:	Պարզել՝ արդյոք պարտավորությունը նպաստում է 1) թափանցիկության բարձրացմանը, 2) քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ստեղծմանը կամ բարելավմանը, 3) պաշտոնյաների գործողությունների նկատմամբ վերահսկողության և հաշվետվողականության ապահովմանը:	3.1.2
Նորարարություն և արդյունքի ներուժ	Պետք է գնահատել՝ արդյոք պարտավորությունը նոր է, թե շարունակություն արդեն գոյություն ունեցող քաղաքականության կամ նախաձեռնության:	Գնահատել պարտավորության արդյունք ապահովելու ներուժը և այն, թե որքանով այն կարող է իրական փոփոխություն բերել տվյալ ոլորտում՝ համեմատած առկա իրավիճակի հետ:	3.1.3, 3.1.4
Պարտավորության ստուգելիություն	Պարտավորությունը համարվում է ստուգելի, եթե դրա նպատակներն ու գործողությունները հստակ են և հնարավոր է գնահատել դրանց իրականացումը:	Գնահատել՝ արդյոք նախատեսված քայլերն ունեն հստակ և ստուգելի արդյունքներ (output) և չափելի ազդեցություն (outcome), որը հնարավոր է գնահատել իրականացման ավարտին:	3.1.1

Պարտավորության ավարտական գնահատումը պետք է իրականացվի յուրաքանչյուր պարտավորության ավարտից հետո 1 ամսվա ընթացքում:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պարտավորության ավարտի գնահատումը անդրադառնում է յուրաքանչյուր առանձին պարտավորության արդյունքներին՝ դրա լիարժեք իրականացումից հետո կամ գործողությունների ծրագրի ավարտին. որն ավելի շուտ է տեղի ունենում: Պարտավորության արդյունքների այս կարճ գնահատումը պետք է ներկայացվի առցանց հարթակում: Պարտավորության ավարտի գնահատումը պետք է ներկայացվի պարտավորության իրականացումից մեկ (1) ամիս անց:

Մասնավորապես, գնահատումը պետք է անդրադառնա՝

- Կատարման մակարդակին (Հայերենը հասանելի է Հավելված 3-ում),
- պարտավորության իրականացման միջանկյալ արդյունքներին և վերջնարդյունքներին:

Պարտավորության գնահատման հարցաթերթն այստեղ:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կատարման աստիճան (հարց 1.1) Մոնիթորինգի մարմինը պետք է գնահատի, թե պարտավորությամբ նախատեսված գործողությունները որքանով են իրականացվել՝ հիմնվելով ստուգելի և օբյեկտիվ փաստերի վրա: Հիմնական հարցը հետևյալն է՝ որքանով է իրականացվել տվյալ պարտավորությունը նախատեսված ժամանակահատվածում:

Գնահատման համար կարող են կիրառվել նաև հետևյալ հարցերը.

- Ի՞նչ առաջընթաց է գրանցվել առաջին տարվա ընթացքում,
- Արդյոք պարտավորությունը կատարվել է նախատեսված ժամկետում,
- Ի՞նչ ապացույցներ կան իրականացման վերաբերյալ,
- Ի՞նչ ապացույցներ կան իրականացման վերաբերյալ,
- Ի՞նչ է ասում կառավարությունը,
- Ի՞նչ են ասում ոչ կառավարական շահակիցները և որքանով են տարբեր կարծիքները:

Այս տվյալների հիման վրա մոնիթորինգի մարմինը պետք է ընտրի հետևյալ տարբերակներից մեկը.

- Չի սկսվել,
- Սահմանափակ իրականացում,
- Զգալի իրականացում,
- Լիովին կատարված,
- Չեղարկված:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Վերջնական ուսուցման վարժությունը պետք է իրականացվի ծրագրի ավարտից հետո 2 ամսվա ընթացքում:

Վերջնական ուսուցման վարժությունը նպատակ ունի ամփոփել և վերլուծել ստացված փորձը:
Այն պետք է օգտագործի ինչպես սկզբնական, այնպես էլ ավարտական գնահատումների տվյալները և դրանց հիման վրա ներկայացնի ամբողջ ծրագրի պատկերն՝ սկզբից մինչև վերջ:

Հաշվետվությունում պետք է ընդգծվեն՝

- ծրագրի հաջողությունները
- բարելավման կարիք ունեցող ոլորտները

Այս գործընթացը ոչ միայն գնահատում է կատարված աշխատանքը, այլ նաև օգնում է հասկանալ, թե ինչ փոփոխություններ և արդյունքներ են ստացվել բարեփոխումների և համատեղ աշխատանքի արդյունքում:

Բացի այդ, այն կարող է անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ առաջընթաց չի գրանցվել՝ բացատրելով պատճառները և առաջարկելով հետագա լուծումներ:

Վերջնական ուսումնական վարժությունը և վարժությունից քաղված դասերն ու հետագա քայլերը ամփոփող զեկույցը պետք է իրականացվեն և ներկայացվեն առցանց գործողությունների ծրագրի ավարտից երկու (2) ամիս անց:

Վերջնական ուսուցման գործընթացի լրացման ձևաչափը հասանելի է այստեղ:

Վերջնական ուսուցման գործընթացի ձևավորման առաջարկություններ

ԲԿԳ տեղական անդամները ազատ են ընտրելու, թե ինչպես են իրականացնում վերջնական ուսուցման գործընթացը: ԱՀՄ-ը առաջարկում է, որ մոնիթորինգի մարմինը ձևավորման ընթացքում հաշվի առնի հետևյալ հարցերը.



Գործառույթ (Functionality)

ինչ նպատակ է այն ծառայում

Թիրախային խումբ (Audience)

ում համար է նախատեսված

Կառուցվածք և բովանդակություն (Structure and content)

ինչ ձևով և ինչ բովանդակությամբ է ներկայացվելու

Մշակում (Development)

ինչպես է պատրաստվելու

Ներկայացում (Delivery)

երբ և ինչ ձևով է ներկայացվելու շահակիցներին

Այս հարցերը օգնում են հստակ ձևավորել վերջնական ուսուցման գործընթացի ձևը: ԱՀՄ-ը նաև խորհուրդ է տալիս նախապես ներկայացնել զեկույցի կառուցվածքը, որպեսզի շահակիցները կարողանան իրենց կարծիքները ձևավորել ավելի հստակ շրջանակում: Այս փուլում բնական է, որ տարբեր կողմեր կարող են ունենալ տարբեր կարծիքներ հաջողությունների և դժվարությունների վերաբերյալ, ինչը կարող է առաջացնել նաև տարաձայնություններ: Սակայն այս գործընթացը հնարավորություն է տալիս համադրել տարբեր տեսակետներ և հստակեցնել, թե ինչ է տեղի ունեցել իրականացման ընթացքում՝ հիմնվելով փաստերի վրա:

Վերջնական ուսուցման գործընթացը կարող է կենտրոնանալ հետևյալ ուղղությունների վրա.

- առաջացած խնդիրներն ու խոչընդոտները,
- պարտավորությունների իրականացման ուժեղ կողմերն ու արդյունքները,
- դասերն ու առաջարկությունները՝ ապագա գործողությունների ծրագրերի համար,
- քաղաքական կամ կառավարման փոփոխությունների առաջարկներ՝ նման խնդիրների լուծման համար:

Ամփոփ զեկույցի պատրաստման առաջարկություններ

Վերջնական ուսուցման գործընթացից հետո մոնիթորինգի մարմինը պետք է պատրաստի ամփոփ զեկույց, որը կներկայացնի հիմնական դասերն ու հետագա քայլերը:
ԱՀՄ-ը խորհուրդ է տալիս, որ առնվազն պատրաստվի՝

- 1-2 էջանոց ամփոփում՝ ամենակարևոր արդյունքներով և եզրակացություններով,
- առաջարկներից բաղկացած աղյուսակ՝ հետագա քայլերի համար:

Վերջաբան

ԲԿԳ գործընթացների արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մոնիթորինգը, հաշվետվողականությունը և ուսուցումը դիտարկվում են որպես փոխկապակցված և շարունակական գործընթացներ: Անկախ, օբյեկտիվ և ապացույցների վրա հիմնված գնահատումը հնարավորություն է տալիս ոչ միայն արձանագրել կատարված աշխատանքը, այլև հասկանալ դրա իրական ազդեցությունը, բացահայտել առկա խնդիրները և մշակել բարելավման ուղղություններ:

Սույն ուղեցույցը նպատակ ունի աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակությանը և մոնիթորինգ իրականացնող կառույցներին՝ ձևավորելու առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ ԲԿԳ գործընթացներ: Այն նաև կարևոր գործիք է՝ խթանելու համագործակցությունը կառավարության և հասարակության միջև, ամրապնդելու փոխադարձ վստահությունը և ապահովելու, որ բաց կառավարման հանձնառությունները վերածվեն իրական և չափելի փոփոխությունների համայնքային մակարդակում:

Ուղեցույցում ներկայացված մոտեցումների և գործիքների կիրառումը կարող է նպաստել ոչ միայն գործողությունների ծրագրերի որակյալ իրականացմանը, այլև երկարաժամկետ ինստիտուցիոնալ ուսուցման և կայուն բարեփոխումների մշակույթի ձևավորմանը:

Հավելված 1

Համապատասխանություն (Relevance)

ԲԿԳ (Բաց կառավարման գործընկերություն) Կառավարման կանոնադրության համաձայն՝ ԲԿԳ պարտավորությունները պետք է ունենան բաց կառավարման հստակ ուղղվածություն: Մասնավորապես, դրանք պետք է նպաստեն ԲԿԳ հիմնական արժեքներից առնվազն մեկին՝ թափանցիկությանը, հանրային մասնակցությանը և/կամ հանրային հաշվետվողականությանը:

Գործողությունների ծրագրի ներկայացումից հետո ԲԿԳ Անկախ Հաշվետվության Մեխանիզմը (ԱՀՄ) օգտագործում է «Արդյո՞ք այն ունի բաց կառավարման ուղղվածություն» ցուցիչը՝ յուրաքանչյուր պարտավորության համապատասխանությունը գնահատելու համար՝ Գործողությունների ծրագրի վերանայման շրջանակում:

ԲԿԳ երեք հիմնական արժեքների՝ թափանցիկության, հանրային մասնակցության և հանրային հաշվետվողականության առավել մանրամասն սահմանումները ներկայացված են ԲԿԳ արժեքների ուղեցույցում (OGP Values Guidance Note):
Նշում. ներառականությունն, ինչպես նաև տեխնոլոգիաների և նորարարության կիրառումը նույնպես կարևոր արժեքներ են ԲԿԳ գործողությունների ծրագրերի համար, սակայն դրանք պետք է իրականացվեն վերը նշված երեք հիմնական արժեքներից առնվազն մեկի հետ համատեղ:

ԱՀՄ-ը որոշում է՝ արդյոք պարտավորությունն ունի բաց կառավարման ուղղվածություն, պարտավորության տեքստի մանրամասն ուսումնասիրության միջոցով՝ պատասխանելով հետևյալ հարցին.
Արդյո՞ք պարտավորությունը նպատակ ունի քաղաքականության ոլորտը, հաստատությունները կամ որոշումների կայացման գործընթացը դարձնել ավելի թափանցիկ, մասնակցային կամ հաշվետու հանրության նկատմամբ:

Հավելված 2

Ստուգելիություն (Verifiability)

ԲԿԳ պարտավորությունները պետք է լինեն բավարար չափով հստակ և կոնկրետ, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանց իրականացման առաջընթացը: Ստուգելի պարտավորությունները ներառում են հստակ գործողություններ, որոնք հնարավոր է մոնիթորինգի ենթարկել:
Գործողությունների ծրագրի ներկայացումից հետո ԲԿԳ Անկախ Հաշվետվության Մեխանիզմը (ԱՀՄ) օգտագործում է «Ստուգելիություն» ցուցիչը՝ յուրաքանչյուր պարտավորության ստուգելիությունը գնահատելու համար՝ Գործողությունների ծրագրի վերանայման շրջանակում:

ԱՀՄ-ը անստուգելի պարտավորությունները համարում է «չգնահատվող» (not reviewable) և չի իրականացնում դրանց հետագա գնահատում:

2021 թվականից սկսած ԱՀՄ-ը պարտավորությունների ստուգելիությունը գնահատում է հետևյալ չափանիշներով.

- **Ստուգելի (Verifiable)** – Պարտավորությունը բավարար չափով հստակ է գնահատման համար: Գործողությունների ծրագրում ներկայացված նպատակներն ու առաջարկվող գործողությունները ձևակերպված են հստակ և ներառում են օբյեկտիվորեն ստուգելի գործողություններ, որոնց միջոցով հնարավոր է գնահատել իրականացումը:
- **Անստուգելի (Not verifiable)** - Պարտավորությունը բավարար չափով հստակ չէ գնահատման համար: Գործողությունների ծրագրում ներկայացված նպատակներն ու առաջարկվող գործողությունները բավարար հստակություն չունեն և չեն ներառում բացահայտ ստուգելի գործողություններ, որոնց միջոցով հնարավոր լինի գնահատել իրականացումը:

Նախորդ տարիներին միջին կամ բարձր «կոնկրետություն» (specificity) ունեցող պարտավորությունները համարվում էին ստուգելի:

Հավելված 3

Կատարման աստիճան (Completion)

Պարտավորությունների ազդեցությունն ապահովելու համար կարևոր է, որ իրականացնող կողմերը լիարժեք կատարեն ստանձնած հանձնառությունները: Յուրաքանչյուր պարտավորության համար ԲԿԳ Անկախ Հաշվետվության Մեխանիզմը (ԱՀՄ) գնահատում է, թե ինչ չափով են իրականացվել պարտավորությամբ նախատեսված գործողությունները:

ԱՀՄ-ը այս տեղեկատվությունն արտացոլում է «Կատարման աստիճան» (Completion) ցուցիչի միջոցով, որը գնահատվում է հինգաստիճան սանդղակով.

- Ապացույցներ չկան (No Evidence Available)
- Չի սկսվել (Not Started)
- Սահմանափակ իրականացում (Limited)
- Զգալի իրականացում (Substantial)
- Լիովին կատարված (Complete)

ԲԿԳ տվյալների վերլուծության նպատակով «Զգալի իրականացում» և «Լիովին կատարված» գնահատական ստացած պարտավորությունները համարվում են բարձր կատարման մակարդակ ունեցող պարտավորություններ: ԱՀՄ-ը պարտավորությունների կատարման աստիճանը գնահատում է գործողությունների ծրագրի ավարտից չորս ամիս անց՝ Արդյունքների հաշվետվության (Results Report) շրջանակում:

www.ngoc.am info@ngoc.am +374 91743315